

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ «ՂՐԻՄԻ ՀԱՐԹԱԿ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ ԻՐԱՎԻ ՂԱՐԻՔԱՆՎԻՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԸ ՈՒԿՐԱԻՆԱ

Օգոստոսի 21-23-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, կառավարական պատվիրակության ուղեկցությամբ, եռօրյա պաշտոնական այցով գտնվում էր Ուկրաինայում: Վարչապետի գլխավորած վրացական պատվիրակության կազմում էին փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին, պաշտպանության նախարար Ջուանշեր Բուրժուլաձեն և կառավարության աշխատակազմի ղեկավար Իլիա Դարչիաշվիլին:



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Լվովի միջազգային օդանավակայանում Վրաստանի վարչապետին դիմավորեց նրա ուկրաինացի գործընկեր Դենիս Շմիգալը: Այցի շրջանակներում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին Կիևում հանդիպում ունեցավ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Չեռնոմիրուկի, վարչապետ Դենիս Շմիգալի և

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՇՎԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈՉԱԿԱԳՐԻ 31-ԱՄՅԱԿԸ

Օգոստոսի 23-ին Հայաստանը նշեց Անկախության հռչակագրի 31-ամյակը:

1990 թվականի օգոստոսի 23-ին, Խորհրդային Միության նախկին հանրապետությունների կազմից Հայաստանն առաջիններից մեկն էր, որ ընդունեց անկախ պետականության հաստատումը վավերացնող հռչակագիրը: Սպիտակի ավերիչ երկրաշարժի դեռևս արճառնող վերքի, դարաբաղյան դաշտերում ծավալված մարտերի ֆոնի վրա Հայաստանի այն ժամանակվա Գերագույն խորհրդի կողմից անկախության հռչակագրի ընդունումը անկախ պետություն ունենալու հայ ժո-



ղովրդի անկապտելի կամքի ու սերնդեսերունդ փոխանցած երազանքի արտահայտությունն էր: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ



Չերդ Սրբություն. Ընդունեք մեր անկեղծ շնորհավորանքները Ձեր ծննդյան 70-ամյակի առթիվ: Դուք Հայաստանյայց Առաքելական Սուրբ



Եկեղեցու Կաթողիկոսների արժանավոր իրավահաջորդն եք, որոնց նպատակը ծառայությունն էր իրենց Եկեղեցուն և ժողովրդին: Ձեր փորձն ու իմաստությունը առանձնակի գնահատելի են մեր բարդ ժամանակահատվածում:

Մաղթում են Ձեզ խաղաղություն, առողջություն և հոգու կայունություն Ձեր սրբազնագույն ծառայությունում:

ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սցխեթայի-Թբիլիսիի արքեպիսկոպոս, Պիցունդայի Ցխում-Աբխազեթի միտրոպոլիտ

ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՆՈՐԱՆԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 26-ԱՄՅԱԿԸ



26 տարի առաջ, 1995 թվականի օգոստոսի 24-ին, Վրաստանի այն ժամանակվա Գերագույն խորհուրդը հավանություն տվեց նորանկախ Վրաստանի ժողովրդավարության հաստատմանն ուղղված սահմանադրությանը նոր խմբագրությամբ:

տահական չէր, որ փոխվող իրավիճակին համապատասխան, որոշակի փոփոխություններ էին կատարվում նաև հիմնական օրենքում: Հատկանշական են «Վրացական երազանք» կուսակցության նախաձեռնությամբ 2018 թվականին իրականացված փոփոխությունները, որոնք երկրի գլխավոր փաստաթղթում

է՛լ ավելի ընդգծեցին ժողովրդավարության և եվրոպական արժեքներին հավատարմության գաղափարները: Այսօրվա դրությամբ, Վրաստանն ունի կայուն ժողովրդավարական զարգացման համար եվրոպական չափորոշիչներին համապատասխանող Սահմանադրություն:

COVID - 19

ԷԿԱՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱԶԵ. «ՈՒՍՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅՆ ԱՊԱՆՈՎ ԿԼԻՆԻ, ԵՐԸ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ԱՌՆՎԱԶՆ 80 ՏՈԿՈՍԸ ԼԻՆԻ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ»

Օգոստոսի 23-ին, միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստից հետո, Վրաստանի առողջապահության նախարար Էկատերինե Տիկարաձեն, անդրադառնալով նոր ուսումնական տարվա մեկնարկի հետ կապված թեմային, հայտարարեց, որ ուսուցիչների պատվաստումը կարևոր է կրթության մեկնարկի համար:

- Հիմնական պայմաններից մեկը ուսուցիչների զանգվածային պատվաստումն է: Ինչպես հայտարարել է Ամիրան Գամդրելիձեն, մենք համաձայն ենք, որ ուսուցիչների առնվազն 80 տոկոսը պատվաստվի, որպեսզի համարենք, որ դպրոցն անվտանգ է: Կարևոր

է հաշվի առնելով նաև ներդրված բոլոր միջոցառումները, առավելագույնի հասցնել համաճարակային իրավիճակի կայունացումը, որպեսզի մեր երեխաները կարողանան դասարանում սովորել անվտանգ միջավայրում,- ընդգծեց նախարարը:

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԵՐԿՈՒ ԱԶԳԵՐԸ ԿԱՄՐՋՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ



ԻՐԱՎԻ ԿՈՎՁԱՆԱԶԵ

Լրացավ Վրաստանում լույս տեսնող հայալեզու «Վրաստան» թերթի առաջին համարի հրատարակման 100-ամյա հոբելյանը: Իմ անկեղծ բարեմաղթանքներն են ցանկանում հղել իմ մեծ բարեկամ, թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրջյանին, «Վրաստանի» խմբագրության բոլոր աշխատակիցներին պանծալի հոբելյանի առթիվ, յուրաքանչյուրին ցանկալ անձնական երջանկություն, երկարակեցություն և ստեղծագործական հաջողություններ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՍԻՐԵԼԻՆԵՐՍ, ՇՆՈՐՀԱՎՈՐ ԹԵՐԹԻ ՍԵԿՐԱՐՅԱ ՀՈՐԲԵՅԱՆԸ

Անչափ ուրախ եմ, որ ինձ բախտ վիճակվեց մեկ-դարյա հոբելյանի առթիվ շնորհավորել մեր սիրելի «Վրաստան» թերթին: Անձամբ ինձ մոտ շատ բարի հիշողություններ են կապված թերթի հետ և որոշակիորեն հպարտություն են ապրում այն մտքից, որ թեկուզ կարճ ժամանակով աշխատակցել եմ պարբերականին, իմ ստորագրությամբ նյութերը տպագրվել են թերթի էջերում:



ԱԼԻՆԱ ԲԱՂՂԱՍՆԱՅԱՆ

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՁԵԶ, ՎԵՐԱՓԱՐ ՏԵՐ

Ամենայն Հայոց 132-րդ Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տեր-Տեր Գարեգին Երկրորդ, սիրելի Վեհափառ Տեր, «Վրաստան» թերթի աշխատակազմի, մեր բազմահազար

ընթերցողների և անձամբ իմ անունից շնորհավորում են Ձեր հոբելյանական տարեդարձը: Պատիվ են ունեցել երեւանում և Էջմիածնում անձամբ շնորհավորելու: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԵՐ ԿԻՐԱԿՈՍ ՎՈՐԴՊԵՏ ԴԱՎԹԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՐԱՊՄԻ ԿԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄԻ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՆԱԿՅԵՅ «ՂՐԻՄԻ ՀԱՐԹԱԿ» ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԳԱԿԱԹԱՏՈՂՈՎԻՆ

(Սկզբը՝ 1-ին էջում)

Գերագույն ռադայի խոսնակ Դմիտրի Ռագունովի հետ: Բացի այդ, Վրաստանի կառավարության ղեկավարը մասնակցեց Ուկրաինայում անցկացվող լայնածավալ «Ղրիմի հարթակ» գագաթնաժողովին: 44 երկրների և կազմակերպությունների ղեկավարները մասնակցեցին «Ղրիմի հարթակ» հիմնադրի գագաթնաժողովին, որը Կիևում բացվեց Ուկրաինայի անկախության 30-ամյակի նախօրեին: Ռուսաստանի կողմից Ղրիմի բռնազավթումից յոթ տարի անց, դա առաջին միջազգային նման լայնածավալ միջոցառումն էր՝ նվիրված թերակղզու ապաբռնազավթման հարցին:

սեղ տարածաշրջանում Ռուսաստանի ապակայունացնող, բռնազավթիչ քաղաքականության մասին:

- Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել նախագահ Վլադիմիր Ձելենսկուն՝ համավարակի պայմաններում սույն միջոցառման կազմակերպման համար: «Ղրիմի հարթակ» կազմակերպումը թույլ է տալիս խոսել այն սարսափելի փաստերի մասին, որոնք ժողովրդի դեմ իրականացվում են բռնազավթիչ ուժերի կողմից, - հայտարարեց Վրաստանի վարչապետը և հավելեց, որ չկարգավորված հակամարտությունները տարածաշրջանի երկրների համար լուրջ բարդություններ են առաջացնում և խախտում են եվրոպական և եվրատլանտյան անվտանգության ողջ համակարգը:



- 13 տարի առաջ Ռուսաստանի Դաշնությունը լայնածավալ ռազմական ագրեսիա ձեռնարկեց Վրաստանի դեմ, որի արդյունքում զոհվեցին հարյուրավոր խաղաղ բնակիչներ և զինծառայողներ, ոչնչացվեցին տասնյակ վրացական գյուղեր, ինչը իրահրեց էթնիկ զտման նոր փուլի և հազարավոր մարդկանց տարահանում: Ավելի ուշ, 2014-ին նույն բախտին արժանացավ նաև Ուկրաինան, - նշեց

Իրակլի Ղարիբաշվիլին, և հույս հայտնեց, որ «Ղրիմի հարթակը» կվերածվի կարելոսկոպուսի հարթակի, որը պաշտպանության կարծանանա միջազգային գործընկերների կողմից և երկարաժամկետ ազդեցություն կգործի Սեւծովյան տարածաշրջանի առջև ծառայած մարտահրավերների վրա:

Նշենք, որ Ռուսաստանի ԱԳ նախարարությունը վերոնշյալ միջոցառումն անվանեց «հակառուսական իրարանցում», ոտնձգություն Ռուսաստանի տարածքային ամբողջականության նկատմամբ և մասնակիցներին մեղադրեց «նեոնացիստական և ռասիստական տրամադրվածությունների արմատավորման մեջ»:

Ռուսաստանի նախագահին առնչվող Ղրիմի մշտական ներկայացուցիչ Գիորգի Մուրադովը հայտարարեց, որ գագաթնաժողովի հյուրերի համար կարող են լինել «ցավալի հետեւանքներ»:

ՌԻԿՐԱԻՆԱՅԻ ՊԱՐԳԵՎԸ՝ ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼՈՒՆ...

Ուկրաինա կատարած պաշտոնական այցի ժամանակ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Ուկրաինայում «Ղրիմի պլատֆորմ» գագաթնաժողովի շրջանակներում, Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Ձելենսկու կողմից պարգևատրվեց առաջին աստիճանի «Վաստակի համար» շքանշանով:

Նույն շքանշանով Վլադիմիր Ձելենսկին պարգևատրել է նաև Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելին, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Վալդիս Դոնբրովսկու, և

Լեհաստանի, Եստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Ֆինլանդիայի, Սլովակիայի և Սլովոնիայի նախագահներին, Ռումինիայի, Սլովակիայի և Խորվաթիայի վարչապետներին:



...ԵՎ ՎԱԽԹԱՆԳ ԿԻՎԱԲԻՉԵԻՆ

Օգոստոսի 23-ին, Ուկրաինայի անկախության օրվան նվիրված գորահանդեսի ժամանակ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Ձելենսկին վրաց ճանաչված երգիչ, կինոդերասան Վախթանգ Կիկաբժեժին պարգևատրեց «Յարուսլավ Իմաստունի» հինգերորդ աստիճանի շքանշանով:

Դա Ուկրաինայի պետական շքանշան է, որը Ուկրաինացի և օտարերկրների քաղաքացիներին տրվում է Ուկրաինայի միջազգային հեղինակության ուժեղացման, պետության զարգացման գործում ներդրած ավանդի, բարեգործության ու հասարակական ակտիվ գործունեության համար:



ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

«ՎՐԱՍՏԱՆԸ» ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ՁԵՋ, ՎԵՐԱՓԱՌ ՏԵՐ

(Սկզբը՝ 1-ին էջում)

հավորելու Ձեր 40, 50 և 60-ամյակները: Ցավոք, առաքելությամբ Ձեր արտասահմանում գտնվելու հանգամանքը զրկեց շատերին նշանակալի 70-ամյա հորեկյանը և անձամբ շնորհավորելու պատվից:

Վստահ եմ, որ նույն իմաստությամբ

դեռ երկար տարիներ պիտի առաջնորդեք հավատավոր աշխարհասփյուռ հայությանը: Լիահույս եմ, Ձեր նոր նախածեռնությունները ևս, որոնք մշտապես ուղղված են Հայ Առաքելական Եկեղեցու դեռի բարձրացմանը, սփյուռքահայության միավորմանն ու աշխարհի եկեղեցիների միջև բարեկամությանը, նախորդների նման ևս պսակվելու են հաղթանակով ու նոր վերելքներով:

Վիրահայերս մեծապես ուրախ ենք, որ Հայ Առաքելական




2001 թ. Մայր Աթոռ Սբ. Էջմիածին. Իլիա Երկրորդը և Գարեգին Երկրորդը Վեհարանում, աջից՝ Վան Բայրուրեյանը



Գարեգին Երկրորդը և Կիրակոս վարդապետ Դավթյանը

ու Վրաց Ուղղափառ Առաքելական Եկեղեցիների փոխհարաբերությունները էլ ավելի կքերմանն ու կամրապնդվեն Ձեր և Իլիա Երկրորդի առաջնորդությամբ: Շարունակեք ազգամբեր Ձեր առաքելությունը՝ ի փառս Հայաստանի և աշխարհասփյուռ հայության:

Որդիական ջերմ սիրով ու խոնարհումով՝ Վան Բայրուրեյան



ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ ԱՃՈՒՄ Է

Ռուսաստանի պետական պարտքն ընթացիկ տարվա առաջին վեց ամսվա արդյունքներով աճել է 1,483 տրիլիոն ռուբլով՝ հասնելով 20,4 տրիլիոն ռուբլու կամ ՀՆԱ-ի 17,7 տոկոսի:

Պետական պարտքի աճը անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 7,8 տոկոս: Ներքին պարտքն աճել է 1,435 տրիլիոն ռուբլով կամ 9,7 տոկոսով՝ մինչև 16,187 տրիլիոն ռուբլի: Դրա բաժինը պետական պարտքի ընդհանուր ծավալում 77,9-ից ավելացել է մինչև 79,3 տոկոս: Արտաքին պարտքը ներկա ժամանակաշրջանում աճել է 1,839 միլիարդ դոլարով կամ 3,2 տոկոսով՝ մինչև 58,542 միլիարդ դոլար:

Ռուբլու համարժեքով այդ ցուցանիշն ավելացել է 47,871 միլիարդ ռուբլով կամ 1,1 տոկոսով՝ մինչև 4,237 տրիլիոն ռուբլի:

ԼԵՀԱՍՏԱՆ

ԱՐԳԵԼԱՊՈՍ՝ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԵՏ ՍԱՐՄԱՆԻՆ

Լեհաստանը Բելառուսում գտնվող Իրաքի և Սիրիայի քաղաքացի միգրանտների հոսքի պատճառով նոր 2,5-մետրանոց արգելապատ կկառուցի Բելառուսի հետ սահմանին: Այդ մասին հայտնել է Լեհաստանի ազգային պաշտպանության նախարար Մարիուշ Բլաշչակը: Միաժամանակ, սահմանագիծ կառաքվեն զինծառայողներ, ովքեր օգնելու են սահմանապահներին:

ԱՖՂԱՍՏԱՆ

ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աֆղանստանի Ազգային հաշտեցման բարձրագույն խորհրդի ղեկավար Աբդուլա Աբդուլան, Աֆղանստանի նախկին նախագահ Համիդ Քարզայը և Իսլամական կուսակցության առաջնորդ Գուլբեդին Հեքմատարը կմտեն Աֆղանստանի կառավարման խորհրդի կազմի մեջ, որը մտադրվում է ձևավորել «Թալիբան» արմատական շարժման ղեկավարությունը և որտեղ կներառվեն 12 անդամներ, այդ թվում՝ երկրի նախորդ կառավարության որոշ անդամներ:

Թալիբները չեն ցանկանում Աֆղանստանում վերականգնել նախագահի պաշտոնը կամ որեւիցե այլ միանձնյա ղեկավարի պաշտոն:

ՊԱՅՅՅՈՒՆ ՔԱԲՈՒԼԻ ՕԴԱՆԱԿԱԿԱՅԱՆՈՒՄ

Օգոստոսի 26-ին Քարուլի օդանավակայանի շենքի մոտ տեղի է ունեցել երկու պայթյուն, որոնք կազմակերպել են մահապարտ ահաբեկիչներ: Վերջին տվյալներով, ահաբեկչական գործողության հետեւանքով զոհվել է 170 մարդ, այդ թվում՝ 13 ամերիկացի զինծառայող և 28 թալիբ: Աֆղանստանում իշխանությունը զավթած «Թալիբան» արմատական շարժումը վճռականորեն դատապարտել է տեղի ունեցածը և խոստացել պատժել մեղավորներին:

ԱՐՄԱՂ ՄԱՍՈՒՂԸ ՍԿՈՒՄ Է ՊԱՅՔԱՐ ԹԱԼԻԲՆԵՐԻ ԴԵՄ

Լեգենդար մուջահեդ, դաշտային հրամանատար Ահմադ-Շահ Մուսադդիի որդի՝ Ահմադ Մուսադդին հայտարարել է թալիբների դեմ պայքար սկսելու մտադրության մասին:

Ներկա դրությամբ Մուսադդին վերահսկում է Փենջաբի լեռնաքար և այդ նահանգը վեր է ածել հակաթալիբյան պայքարի կենտրոնի:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒԹՅՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱԽԱԿԱԼԱԶԵՆ ՀԱՆԴՒՊԵՑ ՔԵԼԼԻ ԴԵԳՆԱՆԻՆ

ԴԵՄՊԱՆԸ ՀԱՅՏՆԵՅ ԹԲԻԼՍԻՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Օգոստոսի 27-ին Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն հանդիպում ունեցավ Կրաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան Քելլի Դեգնանի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին մայրաքաղաքում ընթացիկ եւ նախատեսվող նախագծերը, ինչպես նաև վերջին տարիներին իրականացված բարեփոխումները:


Խոսելով Թբիլիսիի սողանքային գոտիների վիճակի մասին, կողմերը կարեւորեցին Վաշինգտոնի սողանքի լանջի կանխարգելման համար իրականացված հաջողված լայնածավալ նախագիծը:

Կախա Կալաձեն ԱՄՆ դեսպանին ներկայացրեց նաև թափոնների կառավարման ռազմավարության ոլորտում նախատեսվող աշխատանքներ: Նա շնորհակալություն հայտնեց Քելլի Դեգնանին Թբիլիսիի կենսական նախագծերին աջակցելու համար եւ ընդգծեց միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից մայրաքաղաքի զարգացման գործում ցուցաբերվող աջակցության դերը:

Կողմերը քննարկեցին նաև Կրաստանի նախընտրական միջավայրը, եւ հույս հայտնեցին, որ ինքնակառավարման մարմինների ընտրությունները, որին ներկա կգտնվեն միջազգային դիտորդներ, կլինեն խաղաղ եւ կայուն:



Թբիլիսիի քաղաքապետարանում տեղի ունեցած հանդիպմանը ներկա է եղել փոխքաղաքապետ Իրակլի Խանաձեն:



ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՎՈՒԵԼԻՔԻ ԳՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՆՈՒՄ ԵՆ

Կրաստանի բենզալցակայաններում վառելիքի գները կրկին թանկացել են: Առանձին բենզալցակայաններում «Ռեգուլյար» բենզինի արժեքը արդեն գերազանցել է 3 լարիի նշագիծը: Իսկ «Պրեմիում» ձևի արդեն մի քանի ամիս է՝ գերազանցել է 3 լարին: Գնաճի հիմնական պատճառն ողջ աշխարհում վառելիքի արժեքի բարձրացումն է:

Այսօրվա դրությամբ SOCAR լցակայաններում 1 լիտր «Պրեմիում» բենզինի արժեքը 3.15 լարի է, իսկ «Ռեգուլյար»-ինը՝ 3.02 լարի:

Wissol բենզալցակայաններում նույնպես 1 լիտր «Պրեմիում» ձևի 3.15 լարի է, իսկ «Ռեգուլյար»-ինը՝ 3.02 լարի:

«Պրեմիում» արժեքը «Լուկոյլ»-ի ցանցում կազմում է 3.05 լարի, «Ռեգուլյար»-ինը՝ 2.93 լարի:

ԿԱՐԿՈՒՄ ՎԱԽԵԹԻ ԵՐԿՐԱՍԱՈՒՄ

Օգոստոսի 26-ին Կախեթի տարածաշրջանի Ղվարելիի մունիցիպալիտետում ուժեղ կարկուտը մեծ վնաս հասցրեց գյուղատնտեսական հանրակներին:

Ղվարելիի մունիցիպալիտետի քաղաքապետ Ռոստոմ Սեսիաշվիլու խոսքով, աղետի հետեւանքով հիմնականում վնասվել են խաղողի այգիները:

- Կարկուտը գրեթե 80-100 տոկոսով ոչնչացրեց խաղողի բերքը Գավազի գյուղում: Այս փուլում տեղեկատվություն է ձեռք բերվում, եւ որքանով տեղյակ են, կարկուտահարվել են նաև Սանավարդի եւ Գրեմի գյուղերը, սակայն վնասի մասին դեռ ճշգրիտ տվյալներ չունեն,- ասաց Ռոստոմ Սեսիաշվիլին:

ԼԱՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄԸ ՊԱՅՊԱՆՎՈՒՄ Է

Օգոստոսի 27-ի դրությամբ Կրաստանի Ազգային բանկի կողմից հրապարակած տեղեկատվության համաձայն՝ 1 ԱՄՆ դոլարի պաշտոնական համարժեքը ազգային տարադրամի հետ կազմում է 3,1248 լարի: Նախորդ օրը ԱՄՆ դոլարի համեմատ լարիի փոխանակման կուրսը կազմում էր 3,1288, հետեւաբար դոլարի համեմատ լարին ամրացել է 0,0040-ի չափով:

Ինչ վրաբերում է եվրոյի հետ լարիի փոխանակման կուրսին, ապա ներկա դրությամբ 1 եվրոյի արժեքը կազմում է 3,6738 լարի, ինչը նախորդ օրվա ցուցանիշի համեմատ նվազել է 0,0104-ի չափով:

ՈԼՈՐՏ

ԱՐՏՈՆՅԱԼ ԱԳՐՈՎԱՐԿԵՐ՝ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԵՌՔԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ



Բանկն արդեն ներգրավվել է գյուղատնտեսության զարգացման գործակալության գյուղատնտեսական մեխանիզացման համաֆինանսավորման պետական ծրագրին եւ դրան մասնակից ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առաջարկում է օգտվել ագրովարկերից: Ծրագրի շրջանակներում, գործակալությունը ցանկացող

մնացած մասը Տերաբանկը ֆինանսավորում է արտոնյալ ագրովարկի տեսքով: Այդ գումարի տարեկան տոկոսադրույքը կազմում է 8 տոկոս, իսկ 48 ամսվա ընթացքում պետությունը լրացուցիչ ֆինանսավորում է իրականացնում:

Հատկանշական է, որ Տերաբանկը ցանկացողներին առաջարկում է նաև գործուն

Այսուհետև շահագրգռված անձինք կարող են գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերել Տերաբանկի արտոնյալ ագրովարկի միջոցով:

Տերաբանկի արտոնյալ ագրովարկից Կրաստանի ողջ տարածքով կարող են օգտվել ինչպես նախկին, այնպես էլ նոր վարկառուները:

Ծրագրին մասնակցել ցանկացողների համար մշակվել է է երեք փուլ: Առաջին փուլը, որը նախատեսում է ծրագրի մասնակցության գրանցումը, կսկսվի սեպտեմբերի 1-ին, ժամը 12:00-ից www.rba.gov.ge կայքով: Երկրորդ փուլը մեկնարկում է սեպտեմբերի 15-ին, ժամը 12:00-ից եւ սկսած այդ ժամանակից հնարավոր կդառնա ծրագրին հայտերի ներկա

յացումը, իսկ փաստաթղթերի ներկայացումը մասնակցները կարող են իրականացնել սեպտեմբերի 20-ին, ժամը 00:01-ից: Յուրաքանչյուր փուլի մեկնարկին www.rba.gov.ge կայքում կհրապարակվեն տեսահանձնարարականներ, ինչը կըլուրացնի ծրագրին ներգրավվածությունը:

Ծրագիրը իրականացվում է ողջ Կրաստանի տարածքով: Ծրագրի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն տրված է գյուղատնտեսության զարգացման գործակալության <https://dit.iy/2XVeMQm> կայք-էջում:

ԶԳՈՒՇՈՒԹՅԱՆ ԿՈՉ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

«ԿՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՏԱԿ ՉԵՆ ԱՆՈՒՄ»

Կրաստանի ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների կառավարման ծառայությունը քաղաքացիներին կոչ է անում զգույշ լինել Կրաստանում անտառային հրդեհների սպառնալիքի պատճառով:

ՆԳ նախարարության արտակարգ իրավիճակների կառավարման ծառայության կողմից տարածված հայտարարության մեջ նշված է, որ, ըստ կանխատեսումների, առաջիկա օրերին Կրաստանում ջերմաստիճանի կտրուկ բարձրացում է սպասվում: Դրա հետ մեկտեղ, որոշ տարածքներում ուժգին քամիներ կլինեն՝ մեծացնելով անտառային հրդեհների վտանգը:

«Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությունը կոչ է անում

բարձր քաղաքացիական պատասխանատվություն ցուցաբերել՝ կրակ չմարել գյուղատնտեսական տարածքներում, դաշտերի կամ անտառների մոտակայքում եւ կրակի օջախներն անցկատ չթողնել»,- ասված է հայտարարության մեջ:

Հրդեհի դեպքում քաղաքացիներին կոչ է արվում անհապաղ տեղեկացնել Հանրային անվտանգության կառավարման «112» կենտրոնին:


Շրջակա միջավայրի ազգային գոր



ծակալության տվյալներով, ինտենսիվ շոգը Կրաստանում կտեսի մինչեւ օգոստոսի 30-ը: Օգոստոսի 29-30-ը սպասվում է քամու ուժգնացում: Օդի ջերմաստիճանը արեւտյան Կրաստանում կարող է գերազանցել +39 աստիճանը, իսկ արեւելյան հատվածում՝ +38 աստիճանը:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՍԻՐԵԼԻ ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐ, ԱՊՐԵՔ ԱՌՈՂՉ ՈՒ ԵՐԶԱՆԻԿ



Օգոստոսի 23-ին գրող եւ թարգմանիչ Գիվի Շահնազարը նշեց ծննդյան 88-րդ տարեդարձը: Հայ-վրացական ընտանիքում ծնված, հայ ու վրաց ժողովուրդներին իր ողջ կյանքը նվիրաբերող եւ մշակութային կապող պատկանելի մտավորականն առաջուր շարունակում է կամրջելու իր առաքելությունը, վերջերս ընթերցողի դատին հանձնելով Հովհ.Թումանյանի հեքիաթների վրացերեն թարգմանությունը:

Թբիլիսիի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի շրջանավարտի եւ կոչումով թարգմանիչ կենսագրությունը հարուստ է վրաց լեզվով մատուցած հայ ու ռուս (Ալեքսանդր Պոլշկին, Անդրեյ Բելի) գրողների բազմաթիվ գլուխգործոցներով՝ այդ թվում Սայաթ-Նովայի «Բանաստեղծությունները» (1972), Պարույր Սեւակի «Եղիցի լույսը» (1978): Այսօր նա թարգմանել է Գրիգոր Նարեկա

ցում, Նահապետ Քուչակին, Վահան Տերյանին, Եղիշե Չարենցին, Ավետիք Իսահակյանին, Համո Սահյանին, Հովհաննես Շիրազին, Սիլվա Կապուտիկյանին, Պերճ Չեյրունջյանին եւ այլոց:

1984-1987 թվականներին Գիվի Շահնազարը եղել է Թբիլիսիի պետական հայկական դրամատիկական թատրոնի տնօրենն ու գեղարվեստական ղեկավարը, 1997 թվականից՝ Կրաստանի պետական կանցլյարիայի ազգամիջյան հարաբերությունների բաժնի ղեկավարը: Գիվի Շահնազարը բազմաթիվ պատվավոր մրցանակների է արժանացել, որոնց թվում՝ Կրաստանի Պատվո շքանշանի, Թբիլիսիի հավատարմության շքանշանի, Նանսենի անվան միջազգային, ինչպես նաև Եղիշե Չարենց

ի ու Իվանե Մաչաբելիի գրական մրցանակների:

Օրվա մարտահրավերը՝ համավարակը նկատառելով ու հանձնարարականներին խիստ հետեւելով՝ Գիվի Շահնազարն իր տարեդարձը նշեց տանը՝ տիկնոջ՝ Նուրուի եւ դուստր՝ Մայայի հետ միասին: Օրն առանձնապես գեղեցկացրին նրա մի խումբ ազգականները, ովքեր եկան եւ պարոն Գիվիի տան գողտրիկ բակում հայրիկին, պապին ու վերջապես ճշմարիտ Թբիլիսցուն անակնկալ մատուցելով բակից՝ շնորհավորեցին նրան դուրդու ու զուռնա-դիոլի թբիլիսյան մեղեդիների նվագակցությամբ:

«Կրաստան» թերթը սիրով միանում է շնորհավորանքներին ու սիրելի Գիվի Շահնազարին մաղթում երջանիկ, առողջ ու ստեղծագործ տարիներ:

սանդր Պոլշկին, Անդրեյ Բելի) գրողների բազմաթիվ գլուխգործոցներով՝ այդ թվում Սայաթ-Նովայի «Բանաստեղծությունները» (1972), Պարույր Սեւակի «Եղիցի լույսը» (1978): Այսօր նա թարգմանել է Գրիգոր Նարեկա

ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ՝ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԱՆԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈՏՄԻՆԴԱՅՈՒՄ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈՉԱՐԳԱՎԸ ԱԿՏԻՎԱՅՆՈՒՄ Է

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 2-ին Վրաստանում անց են կացվելու տեղական ինքնակառավարման ընտրություններ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվությամբ, ընտրություններին մասնակցության հայտ են ներկայացրել շուրջ 50 ընտրական սուբյեկտներ:

Ներկա դրությամբ ավարտին է մոտենում ընտրական սուբյեկտների կողմից մունիցիպալիտետների քաղաքապետերի, ինչպես նաև տեղական սակրեբուլոնների անդամների թեկնածությունների առաջադրման գործընթացը: Այդ տեսանկյունից բավական ակտիվ աշխատանք է իրականացնում «Վրացական երազանք» կառավարող թիմը, որը, նախ հրապարակավ ներկայացրեց մունիցիպալիտետների քաղաքապետերի թեկնածուների ցուցակը, ապա՝ յուրաքանչյուր մունիցիպալիտետում անց է կացնում թեկնածուների ներկայացման շնորհանդեսները:

իր քարոզարշավը սկսեց օգոստոսի 21-ին հանդիպում ունենալով մունիցիպալիտետի խավեթ, Էրինջա, իսկ օգոստոսի 25-ին՝ Սուլղա, Մյասնիկյան, Բոզալ, Դադեշ գյուղերի բնակիչների հետ: Իր նախընտրական ծրագրի մանրամասների հետ միասին, քաղաքապետի թեկնածուն վերոնշյալ գյուղերում ներկայացրեց այդ բնակավայրերից մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական եւ համամասնական անդամության թեկնածուներ Հրաչիկ Մովսիսյանին, Վարդան Պապոյանին, Վաղարշակ Առաքելյանին:

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետի թեկնածու Անի Մոսոյանն իր նախընտրական քարոզարշավը սկսեց օգոստոսի 22-ին այցելելով Թորիա, Ուչմանա, Դաուրմա, իսկ օգոստոսի 24-ին՝ Գանձա, Փոկա, օգոստոսի 26-ին՝ Մեծ հանջալի, Փոքր հանջալի, Կաթնատու գյուղերը: Տեղի բնակիչների հետ հանդիպումներում, քաղաքապետի թեկնածուն մանրամասն խոսեց անցած չորս տարիներին մունիցիպալիտետում իրականացված, ինչպես նաև ընտրություններում հաղթելու դեպքում ծրագրված նախագծերի մասին:



Ինչպես տեղեկացրին «Վրացական երազանքի» ընտրական շտաբում, սեպտեմբերի 30-ին Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում, «Վրացական երազանքի» ղեկավարներն անձամբ կանցկացնեն մունիցիպալիտետների քաղաքապետերի թեկնածուների Մեյքոն Սակարյանի եւ Անի Մոսոյանի ներկայացման շնորհանդեսները: Իսկ մինչ այդ, թե՛ Ախալքալաքիի եւ թե՛ Նինոծմինդայի մունիցիպալիտետներում վերոնշյալ երկու թեկնածուներն անց են կացնում բավական ակտիվ քարոզարշավ: Մասնավորապես, Ախալքալաքիի քաղաքապետի թեկնածու Մեյքոն Սակարյանը



ԸՆԴԴԻՍԱԳԻՐ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԻՐԵՆՑ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

Նշենք, որ Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետներում «Միասնական ազգային շարժումը» որպես քաղաքապետի թեկնածուներ է առաջադրել, համապատասխանաբար, Մելիք Ռախոյանին եւ Ավիկ Բոյոյանին, իսկ «Եվրոպական Վրաստան» Ախալքալաքիում քաղաքապետի պաշտոնի համար առաջադրել է Արսեն Կարապետյանի թեկնածությունը:

Արսեն Կարապետյանը իր ընտրություններին ընթացքի վերահսկողության համար իրենց դիտորդական առաքելություններ ուղարկելու պատրաստակամությունն են հայտնել Վրաստանի գործընկեր երկրներին միջազգային կազմակերպություններին դիտորդական խմբեր առաքելու մասին:

ՈՎՔԵՐ ԵՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, «Վրացական երազանք» կառավարող կուսակցությունը, հոկտեմբերի 2-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրությունների օրինականության հարցի շուրջ ընդդիմության հնարավոր շահարկումների կանխման նպատակով, միջազգային հանրությանը, միջազգային կազմակերպություններին եւ գործընկեր երկրներին դիմել էր ընտրություններին դիտորդական խմբեր առաքելու մասին:

2-ին երկիր կժամանեն 30 երկարաժամկետ դիտորդներ: Նրանք կտեղակայվեն ամբողջ երկրով մեկ եւ կհետեւեն ընտրական գործընթացներին շրջանային մակարդակով: Ալբերտ Ջոնսոնի խոսքով, կարճաժամկետ դիտորդների դերը կկայանա ամբողջ երկրում քվեարկության ընթացակարգերը, ինչպես նաև ծայրերի հաշվարկման ընթացակարգերը վերահսկելու մեջ:

Ավելացնենք, որ ընտրությունների ընթացքի վերահսկողության համար իրենց դիտորդական առաքելություններ ուղարկելու պատրաստակամությունն են հայտնել Վրաստանի գործընկեր երկրներն ու մի շարք միջազգային կազմակերպությունները:

Կառավարող թիմի խնդրանքին առաջիններից մեկը արձագանքեց ԵԱՀԿ/ԺԳՄԻԳ կազմակերպությունը, որի դիտորդական առաքելության ղեկավար Ալբերտ Ջոնսոնի խոսքով Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրը քվեարկության ընթացքին կհետեւեն 350 կարճաժամկետ միջազգային դիտորդներ: Ըստ առաքելության ղեկավարի, դիտորդների այս թիվը բացարձակապես բավարար է կազմակերպության կողմից դրված նպատակներին հասնելու համար: Բացի այդ, ըստ Ալբերտ Ջոնսոնի, դիտորդական առաքելությունը բաղկացած է 12 միջազգային փորձագետներից համարված հիմնական խմբից: Հիմնական խումբը տեղակայված է Թբիլիսիում, եւ Վրաստանում առաջիկա 7 շաբաթների ընթացքում կլինի ժամանակավոր գրասենյակ, իսկ սեպտեմբերի

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՄԻՆԶԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՆ ԼԻՆԻ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 2-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրությունների նախընտրական քարոզարշավի շրջանակներում, «Վրացական երազանք» կառավարող թիմը երկրի մունիցիպալիտետներում անց է կացնում մունիցիպալիտետների քաղաքապետերի եւ սակրեբուլոյի անդամների թեկնածությունների առաջադրման շնորհանդեսները: Թեկնածուների առաջադրմանը զուգընթաց, միջոցառումներին Վրաստանի վարչապետը, խորհրդարանի նախագահը մանրամասն տեղեկատվություն են ներկայացնում երկրում համավարակի պայմաններում տեղեկատվություն եւ ընդդիմության համավարակով պայմանավորված բարդությունների շահարկման փորձերի մասին:



Օգոստոսի 26-ին Ծալենջիխայում անցկացված միջոցառմանը, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, անդրադառնալով ընդդիմության շահարկումների թեմային, հայտարարեց, որ առաջիկա երեք տարիների ընթացքում երկրում ընտրություններ չեն անցկացվի, որն իսկապես եզակի շրջան է, քանի որ վերջին ութ տարիներին գրեթե ամեն տարի ընտրություններ են անցկացվել:

ժաշրջաններում իրականացվող նախագծերի թեմային:

Այժմ մենք սկսել ենք «Նորացված տարածաշրջաններ» նախագիծը, որը ենթադրում է քաղաքային տիպի նոր, ժամանակակից կենտրոնների ստեղծում յուրաքանչյուր մունիցիպալիտետում եւ յուրաքանչյուր քաղաքում: Իհարկե, մենք պետք է ավելին անենք: Չափից շատ դպրոցներ ֆինանսավորվեցին, չափազանց շատ մանկապարտեզներ կառուցվեցին եւ վերականգնվեցին. Ավելի քան 30 դպրոց, ավելի քան 30 մանկապարտեզ, բայց մենք պետք է ավելին անենք: Դրա համար մեզ պետք է խաղաղ, կայուն, հետեւողական զարգացում, եւ այսօր այս շրջանը մեզ համար հաղթելու եզակի հնարավորություն է: Մի կողմից, իհարկե, թող մեր երկիրը հաղթի ե՛ւ հանգիստ, հաստատուն, ե՛ւ արագ տեմպերով շարունակի մեր երկրի զարգացումը, - նշեց Իրակլի Դարիբաշվիլին:

Ութ տարվա ընթացքում յոթ ընտրություններ իսկապես չափազանց շատ է: Այսպես համընկավ, բայց այժմ համընկնում է այնպես, որ ընտրություններ չեն լինի երեք տարի մինչեւ 2024 թվականը: Հետեւաբար, առաջիկա երեք տարիները պետք է լինեն վերակառուցման, զարգացման ու առաջընթացի ժամանակաշրջան, - հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

Իր խոսքում, կառավարության ղեկավարն անդրադարձավ նաև տարածաշրջաններում իրականացվող նախագծերի թեմային:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ «ՎՐԱՅԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՄ ԿԱՐԿԱՆԻՇՈՎ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ՄՐՑԱԿԻՑՆԵՐԻՆ

Օգոստոսի 27-ին «Վրացական երազանք» հրապարակեց Թբիլիսիում կուսակցական վարկանիշների եւ քաղաքապետի թեկնածուների սոցիոլոգիական հարցման արդյունքները:



Հանրության հարցման արդյունքները ներկայացրեց խորհրդարանական մեծամասնության անդամ Միխեիլ Սարջելաձեն: Նրա խոսքով, սոցիոլոգիական հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են օգոստոսի 21-25-ը դեմ առ դեմ հարցման մեթոդի կիրառմամբ:

«Վրացական երազանք» 22 մանդատ, «Ազգային շարժում»՝ 12, «Գիրչի. Ավելի շատ ազատություն», «Հանուն Վրաստանի» եւ «Քաղաքացիներ»՝ 2-2 մանդատ:

Հետազոտության շրջանակներում հարցվել է 2958 մարդ, որոնցից 79,2 տոկոսը նշել է նախընտրելի կուսակցությունը: Միակի սահմանը երեք տոկոս է:

Հետեւաբար, եթե ընտրություններն ավարտվեն այս արդյունքներով, «Վրացական երազանքի» թիմը եւ Կախա Կալաձեն Թբիլիսիի քաղաքային խորհրդում կստանան կայուն մեծամասնություն, ներառյալ՝ մեծամասնականները:

«Ո՞ր քաղաքական կուսակցությանը կքվեարկեիք, եթե վաղը տեղի ունենային ՏԻՄ ընտրությունները» հարցի պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. «Վրացական երազանք» 47,4, «Ազգային շարժում» 25,2, «Գիրչի. Ավելի շատ ազատություն» 4,9, «Հանուն Վրաստանի» 4,7, «Քաղաքացիներ» 3,2, «ԼԵԼՈ» 2,4, «Հայրենասերների այլանս» 1,9, «Եվրոպական Վրաստան» 1,8, «Ռազմավարությունը՝ շինարար» 1,7, «Գիրչի» 1,1, «Լեյբորիստական կուսակցություն» 0,7, «Միացյալ Վրաստան» 0,7 տոկոս: Այլ կուսակցություններ՝ 4,3 տոկոս:

Հարցման հարցերից մեկը վերաբերում էր Թբիլիսիի քաղաքապետի թեկնածուներին: «Ո՞ր թեկնածուի օգտին կքվեարկեիք, եթե վաղը կայանային Թբիլիսիի քաղաքապետի ընտրությունները» հարցի պատասխանները բաշխվեցին հետևյալ կերպ. Կախա Կալաձեն՝ 60,1, Նիկանոր Մելիա՝ 29,2 տոկոս: Այլ թեկնածուներ՝ 10,7 տոկոս: Հարցման արդյունքներով Կախա Կալաձեն առաջին փուլում մեծ առավելությունը կհաղթի ընտրություններում:

Այս տվյալների համաձայն, Թբիլիսիի սակրեբուլոյի անդամների 40 մանդատները կուսակցությունների միջև կբաշխվեն: